ԵԱՀԿ
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
երևանի գրասենյակ

NPIA
National Policing Improvement Agency
INTERNATIONAL ACADEMY BRAMSHILL

Կարիքների գնահատում ուղղված ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող հասարակական կարգի պահպանության բարելավմանը

Ամփոփ զեկույց

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ

Ամփոփ զեկույց

Պատրաստվել է ոստիկանության սուպերինտենդանտ, ոստիկանության հարցերով միջազգային խորհրդատու Դեյվիդ Այենսոնի կողմից

Միացյալ Թագավորության (Բրամսհիլ) Ոստիկանական ծառայությունների բարելավման ազգային գործակալություն

Երեւան 2010

©ԵԱՀԿ 2010

Զեկույցը պատրաստվել է Միացյալ Թագավորության (Բրամսիիլ) Ոստիկանական ծառայությունների բարելավման ազգային գործակալության խորհրդատուի կողմից՝ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի աջակցությամբ:

ISBN 978-92-9235-850-1

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Թումանյան 15, բն. 4 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ամփոփ ներկայացում _____ *4*

2. Ոստիկանության ծառայության ոճը _____ *7*

3. Հասարակության պաշտպանությունը և ոստիկանության աշխատակիցների անվտանգությունը _____ *8*

4. Ոստիկանության ուսումնական հաստատությունները _____ *9*

5. Կրթության ստանդարտացում (ՀԿՊ-ի մասով) _____ *11*

6. Ղեկավար անձնակազմի կողմից միջադեպերի օպերատիվ կառավարում _ *12*

7. Ռադիոհաղորդակցություն _____ *13*

8. Դոնոր կազմակերպությունների աջակցությունը _____ *13*

9. Հատուկ միջոցները և մասնագիտացված ծառայությունները _____ *14*

10. Եզրահանգումներ _____ *15*

11. Առաջարկությունների ցանկ _____ *17*

1. Ամփոփ ներկայացում

Միացյալ Թագավորությունից հրավիրված խորհրդատուն՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երեւանյան գրասենյակի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության (ՀՀ ոստիկանություն) աջակցությամբ, 2009թ. հոկտեմբերի 9-16-ը ընկած ժամանակահատվածում անցկացրեց հասարակական կարգի պահպանության ոլորտում առկա կարիքների անկախ գնահատում:

Նշված ժամանակահատվածում այցելություններ կազմակերպվեցին ՀՀ ոստիկանության հիմնական օպերատիվ ծառայություններ, որտեղ տեղի ունեցան քննարկումներ անձնակազմի[1] ներկայացուցիչների հետ, հանդիպումներ ֆոկուսային խմբերի հետ և դիտարկումներ:

Իրադրությունը նշված ժամանակահատվածում խորհրդատուին հնարավորություն ընձեռեց դիտարկելու մի շարք ոստիկանական միջոցառումներ, ինչպես նաև՝ Երևանի 2971-ամյակի կապակցությամբ կազմակերպված տոնակատարությունները: Նշված միջոցառումներից էին ֆուտբոլի աշխարհի գավաթի ընտրական փուլի հանդիպումը Հայաստանի և Իսպանիայի ազգային հավաքականների միջև, Հայաստանի և Թուրքիայի միջև արձանագրությունների ստորագրման դեմ բողոքի երկու ցույցերը և տոնակատարությունների եզրափակիչ բազմամարդ բացօթյա համերգը:

Նախնական վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ «<u>հասարակական կարգի պահպանություն</u>[2]» հասկացությունը կիրառվում է իբրև «համընդգրկուն» եզր՝ իր տարբեր մեկնաբանություններով: Հաճախ այն դիտվում է որպես մի մոտեցում, որում շեշտը դրվում է առանձին առաջադրանքների կատարման և կարգադրողական ոստիկանության ոճի վրա, ուստի վերլուծությունն ընդլայնվեց՝ ընդգրկելով «հասարակական անվտանգության պահպանություն[3]» հասկացությունը, որի բաղադրիչ մասն է «հասարակական կարգի պահպանությունը»:

Արդյունքում մշակվեց մասնագիտական ուղղվածությամբ համակողմանի մի փաստաթուղթ, որում նախանշվեցին զարգացման/բարելավման հինգ հիմնական ուղղությունները.

---

[1]«Ոստիկանության անձնակազմ» եզրը օգտագործվում է «ծառայող» ընդհանուր եզրի հետ շփոթություն չառաջացնելու նպատակով, ինչպես օրինակ՝ ծառայողների դաս:

[2]Հասարակական կարգի պահպանություն նշանակում է կարգուկանոնի կառավարում, ներկայության ապահովում, կարգուկանոնի պահպանությունը և վերահսկողության իրականացում ֆիզիկական մեթոդներով, այսինքն՝ բախումների կարգավորման ժամանակ ուղղակի միջամտության գործադրում:

[3]Հասարակական անվտանգության պահպանության ժամանակ շեշտադրվում են նախականխող ռազմավարական գործողությունները, իրավախախտումների կանխարգելումը, ժողովրդի կառավարումը, ընդհանուր բնույթի անվտանգության մեթոդների կիրառումը՝ ուղեփակոցներ, փողոցների լուսավորում, ճանապարհային անվտանգություն, այլ ոչ թե՝ մարդկանց վարքագծի վերահսկում: ՀԱՊ-ը ենթադրում է բազմագերատեսչական ծրագրում և կոորդինացում՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

1. Ամրապնդել ղեկավար անձնակազմի կարողությունները և պատրաստակամությունը, ոստիկանության գործունեությունը կազմակերպելիս, կիրառել «հասարակական անվտանգության պահպանություն» բազմագերատեսչական մոտեցումը, որն ավելի ընդարձակ հասկացություն է, քան «հասարակական կարգի պահպանությունը»:

2. Պետք է խորացված կերպով ուսուցանվեն տակտիկական գործողությունների և ուժային միջոցների սանդղակի կիրառմանն առնչվող թեմաները. սա ուղղակիորեն կապված է այն հանգամանքի հետ, որ համակարգում չափազանց մեծ է շեշտը անկարգությունների կարգավորման վրա՝ բախումների կառավարման և ոստիկանության պասիվ գործելակերպի փոխարեն:

3. Հարկավոր է անցում կատարել դեպի «ոստիկանի անվտանգության» ստանդարտային մոտեցում՝ համակիրառելի «հատուկ միջոցների»[4] փոխարեն օգտագործելով «համազգեստային պարագաներ» հասկացությունը: Դա կնպաստի, որպեսզի <u>բոլոր աշխատակիցների</u> նվազագույն անձնական պաշտպանությունը լինի նույնական մակարդակի՝ միևնույն ժամանակ քաղաքացիներին հնարավորություն տալով վստահ լինելու ոստիկանության դերի և կարողությունների առումով:

4. «Հատուկ միջոցների» տեսակը որոշելու, դրանք ձեռք բերելու և կիրառելու առումով անհրաժեշտ է ցուցաբերել առավել խորքային գիտական մոտեցում: Այդ մոտեցումը պետք է ապահովի ոստիկանության տակտիկական խնդիրների հաջողությունը, սակայն հատուկ միջոցների կիրառման ընթացքում պետք է շեշտակի ուշադրություն դարձնել մարդկանց անվտանգության և հաշվետվողականության ապահովման վրա:

5. Անհրաժեշտ է ամրապնդել ոստիկանության՝ միջադեպերի կառավարման հետ կապված կարողությունները և հաշվետվողականությունը հետևյալ միջոցներով. ապացույցների հավաքագրման թիմերի ստեղծում, ղեկավար օղակի աշխատակիցների՝ տակտիկական հարցերով խորհրդականների ներգրավվում, ստուգման ենթակա «հրամանների գրանցամատյանի» օգտագործում, միջադեպերի ընթացքում տեղի ունեցող ռադիոհաղորդակցությունների ձայնագրում:

[4]Հատուկ միջոցների շարքին են դասվում ինը մասնագիտացված զինատեսակներ կամ տակտիկական մեթոդներ՝ էլեկտրահարող սարքեր, ռետինե մահակներ, ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ, ձեռնաշղթաներ, արցունքաբեր գազ, տրանսպորտի հարկադիր կանգնեցման միջոցներ, ջրանետեր, ծառայողական շներ և հատուկ ներկող նյութեր:

ՀՀ ոստիկանության՝ արհեստավարժ, արդյունավետ և հաշվետվողական ծառայություն ստեղծելու պատրաստակամությանը օժանդակելու նպատակով՝ մշակվել է 44 առաջարկություն, որոնց մեծ մասի իրագործման արդյունքում քաղաքացիները կկարողանան գնահատել ոստիկանական ծառայության աշխատանքը, որի գործելակերպում բարելավված կլինի քաղաքացիների հետ շփումը եւ ներառված կլինի ոստիկանական ծառայությունների մատուցման համայնքային ոճը (Տե՛ս 11-րդ բաժինը):

Նշված առաջարկություններից շատերը վերաբերում են ոստիկանության վարկանիշը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը բարձրացնելու նպատակով ոստիկանության աշխատանքի կատարելագործմանը: Առաջարկությունները կիրառելու դեպքում, շատ կարճ ժամանակահատվածում, կբարելավվեն ոչ միայն ոստիկանության՝ հասարակական կարգի պահպանության հետ կապված մեթոդները, այլ նաև հասարակության վերաբերմունքը ոստիկանության նկատմամբ, վերջինիս հաշվետվողականությունը և հարաբերությունները զանգվածային լրատվամիջոցների հետ:

Առաջարկությունների նպատակն է նաեւ հորդորել ծառայությունների ստանդարտացումը: Բացի այդ դիտարկումներ են արվել առ այն, թե ինչպես բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը՝ շնորհիվ միջոցների առավել պատշաճ օգտագործման և, ամենակարևորը, տեսանելի ոստիկանության, որը հոգատարությամբ է վերաբերվում նրանց, ում ուղղված է ծառայությունը:

Հայաստանի Հանրապետության համար կարևոր նշանակություն է ձեռք բերում հասարակայնության հետ նման խորքային կապերի զարգացումը և այլ պետությունների ակնկալիքներին համահունչ գործելակերպի կիրառումը, քանի որ գնալով աճում է Եվրոպական Միության ուշադրությունը քաղաքական գործընթացների նկատմամբ, ինչպես նաև՝ հասարակական հետաքրքրությունը:

Դեյվիդ Այենսոն
Ոստիկանության սուպերինտենդանտ

2. Ոստիկանության ծառայության ոճը

ՀՀ ոստիկանության, այդ թվում՝ ներքին զորքերի աշխատակիցների կողմից «հասարակական կարգի պահպանություն» (ՀԿՊ) հաճախակի կիրառվող եզրը ընկալվում է իբրև համընդգրկուն և ընդհանրական հասկացություն, սակայն իրական օպերատիվ գործողությունների դիտարկումները ցույց տվեցին, որ խոսքն ավելի շուտ գնում է ոստիկանության և միջադեպերի կարգավորման ավելի բարձր ուժային[5] ոճի մասին. հիմնական նպատակ է համարվում հրահանգի կատարումը, այլ ոչ թե շրջապատի կառավարումը, քաղաքացիների ազատությունների պաշտպանությունը կամ ժողովրդի աջակցությանն ուղղված «ոստիկանական ծառայության» մատուցումը:

Ոստիկանության առօրյա աշխատանքում, հատկապես երեկոյան ժամերին, քիչ նկատելի էր ժողովրդավարական ոստիկանությանը բնորոշ պասիվ և տեսանելի մասնակցություն ցուցաբերելու ոճը:[6]

Այդ պատճառով էլ կարիքների գնահատման նպատակով ՀԿՊ-ի փոխարեն ավելի մեծ շեշտ դրվեց «հասարակական անվտանգության պահպանության» (ՀԱՊ) վրա, այդ թվում՝ ուսուցման, սարքավորումների և օպերատիվ գործողությունների առումով: Բացի այդ, նույն նպատակով անհրաժեշտ է վերանայել օպերատիվ կարողությունները՝ միջադեպերի կառավարման պասիվ մեթոդների մասով:

Ոստիկանության տարածքային բաժիններում գերբյուրոկրատական մոտեցում են ցուցաբերում «հերթապահ խմբերի»[7] նկատմամբ, քանի որ վերջիններս չունեն լիարժեք լիազորություններ, ու, թեև աշխատակիցների ուսումնառության գործընթացը շատ երկարատև է (չորս տարի ոստիկանության ակադեմիայում), խնդիրներն արհեստավարժորեն լուծելու անհատական կարողությունների, անկախության և լիազորությունների մակարդակը նվազագույն է: Բարենորոգումների համար նշված հանգամանքը եղել է և կմնա խոչընդոտ՝ հատկապես համայնքային ոստիկանության ուղղությամբ հետագա առաջընթացի առումով:

Պարեկային ծառայությունն առերևույթ անարդյունավետորեն է օգտագործվում, պարեկությունը կատարվում է խմբերով (հաճախ ներքին զորքերի ծառայողների

---

[5]Բարձր ուժային մեթոդները վերաբերում են ոստիկանության ավելի կուռ ոճին, երբ ակնկալվում է բախումների կարգավորման անհրաժեշտություն: Բախումների կարգավորման համար հաճախ պահանջվում է վերահսկողության ավելի բարձր աստիճան և օրինաչափ ուժային միջոցների գործադրում:

[6]Տեսանելի մասնակցություն ցուցաբերելու ոստիկանության ոճի նպատակն է ցույց տալ, որ ոստիկանության աշխատակիցները հասարակության անբաժանելի մասն են և մշտապես շփվում են քաղաքացիների հետ՝ քննարկելով վերջիններիս առօրյային վերաբերող թեմաներ:

[7]«Հերթապահ խումբը» ոստիկանության տարածքային բաժինների աշխատակիցներից կազմված (թաղային տեսուչ, հետաքննիչ և անչափահասների գծով տեսուչ) օպերատիվ միավոր է, որը գործում մեկ ավտոմեքենայով:

հետ միասին), որոնք, ըստ ամենայնի, ունեն որոշումներ կայացնելու շատ սահմանափակ իրավասություն: Առկա համակարգի և գործողությունների ռազմավարության պայմաններում, ըստ երևույթին, անհնար է ապահովել ոստիկանության ժամանակակից ծառայություն, քանզի նախապատվությունը տրվում է տեսանելիության՝ իբրև կանխարգելիչ միջոցի ապահովմանը:

Ճանապարհային ոստիկանության ընդհանուր ռազմավարական գործողությունները, նախաձեռնողականությունը և հասարակության հետ կապը նպատակային չեն և էլ ավելի են խորացնում անջրպետը ոստիկանության և ժողովրդի միջև:

3. Հասարակության պաշտպանությունը և ոստիկանության աշխատակիցների անվտանգությունը

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «հատուկ միջոցների» կիրառման/ լիազորությունների մակարդակի առումով ոստիկանության տարբեր ծառայությունների մոտեցումները և հաստատող ատյանները տարբեր են: Ճանապարհային ոստիկանության ստանդարտային պաշտպանության միակ միջոցն ատրճանակն է, և որևէ այլ «հատուկ միջոց» նրանք չեն կրում: Արդյունքում ոստիկանության աշխատակիցները և հասարակության անդամները դառնում են խոցելի, քանի որ ոստիկանները հնարավորություն չունեն օգտագործելու համեմատաբար նվազ ուժային[8] միջոց, այսինքն՝ վերջիններս իրենց տրամադրության տակ չունեն արցունքաբեր գազ, մահակ կամ ձեռնաշղթա:

Ոստիկանության տարածքային բաժինների թաղային և անչափահասների հարցերով տեսուչները «հատուկ միջոց» որպես կանոն կրում են միայն հատուկ միջոցառումներին մասնակցելիս կամ որպես հերթապահ խմբի անդամ, այլապես, նույնիսկ իրենց սպասարկման տարածքում ծառայություն տանելիս, չեն կրում որևէ «հատուկ միջոց»:

ՀԿՊ-ի և ոստիկանի անվտանգության նկատառումներից ելնելով՝ ոստիկանության <u>բոլոր ծառայությունների</u> աշխատակիցներին սեփական պաշտպանությունն ապահովելու համար պետք է հատկացվեն տարրական «հատուկ միջոցներ»՝ վտանգի աստիճանին համապատասխան մակարդակի: Հանրության անդամները, այդ թվում՝ կասկածյալները, իրավունք ունեն վստահ լինելու, որ ցանկացած ուժային միջոցի կիրառումը հավասարազոր կլինի սպառնացող վտանգի աստիճանին: Ուստի սարքավորումների ստանդարտացումը պետք է դառնա առաջնահերթ խնդիր, անհրաժեշտության

[8]Նվազ ուժային միջոցները վերաբերում են ժողովրդի հետ առօրյա շփումներին և ոստիկանություն այնպիսի մոտեցմանը, ըստ որի քաղաքացիների ոչ լուրջ խնդիրներին լուծում է տրվում հաղորդակցվելու, օրինական լիազորությունները կիրառելու և ուժի սահմանափակ գործադրման միջոցով:

դեպքում նաև՝ համապատասխան օրենսդրական փոփոխություններով հանդերձ՝ «անհրաժեշտ սարքավորում» և «հատուկ միջոց» կատեգորիաները տարանջատելու համար:

Նշում. Անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել ժողովրդի հետ շփման եղանակների, ոստիկանական պասիվ պատնեշների օգտագործման (բաց, փակ և ուժեղացված պատնեշներ) և ստանդարտային համազգեստով երթերն ուղեկցող խմբերի վրա, քանի որ դիտարկված ոստիկանական միջոցառումների ժամանակ այդ ամենն ակնհայտորեն բացակայում էր:[9]

4. Ոստիկանության ուսումնական հաստատությունները

Ոստիկանության ուսումնական կենտրոնի տնօրենը համահեղինակել է «ՀՀ ոստիկանության կրթական համակարգի բարեփոխումների հայեցակարգը», որի հիմքում դրված է ուշադրության արժանի ոստիկանության կադրերի համալրումը և կրթությունը ստանդարտացնելու կուռ մոտեցում:

Ոստիկանության ակադեմիայի և ուսումնական կենտրոնի շենքային պայմանները տարբերվում են. ուսումնական կենտրոնը, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի աջակցության շնորհիվ, գտնվում է բարվոք վիճակում է և ապահովում է ուսումնառությանը նպաստող միջավայր: Մինչդեռ ոստիկանության ակադեմիան գտնվում է անմխիթար պայմաններում, և որոշ առարկաների, մասնավորապես՝ կրակային պատրաստականության դասավանդումը չի կարող կատարվել ընդունված չափանիշներին համապատասխան:

Գրեթե բոլոր կրակային պարապմունքներն անցնում են սիմուլյացիոն եղանակով, իսկ մարտական հրազենի կիրառումը սահմանափակ է, թեև ուսումնական կենտրոնն ունի երկգծային հրաձգարան: Սիմուլյացիոն պարապմունքների ժամանակ օգտագործվող սարքավորումները չեն կրկնօրինակում իրական օպերատիվ իրավիճակներ, երկու դիտարկված սիմուլյացիոն վարժությունները հատկապես մտահոգություն առաջացրեցին. դրանց նպատակն էր զարգացնել հակազդեցության արագությունը և ենթադրում էր չափազանց ակտիվ մասնակցություն՝ <u>հավասարակշռված և վտանգի աստիճանին հավասարազոր</u> լուծում ապահովելու փոխարեն:

Երկու հաստատություններից և ոչ մեկի դասասենյակներում չկային <u>տեսողական պարագաներ</u> կամ <u>գծապատկերային պաստառներ</u>[10]՝ կոչված հոգեբանորեն

[9]«Մասնագիտական զեկույցի» Հավելված II-ում հանգամանորեն ներկայացված են խորհրդականի կողմից դիտարկված միջոցառումների ոստիկանական գործողությունները, համապատասխան նկատառումները և հակիրճ նկարագրությունը:

[10]«Մասնագիտական զեկույցի» Հավելված III-ում ներկայացված են տեսողական պարագաների և ցուցապաստառների մի քանի օրինակ:

խորացնելու առանցքային կապը դասանյութի, մարդու իրավունքների սկզբունքների և ՀԿՊ իրավիճակներում ուժի գործադրման միջև:

Նման տեսային պարագաների վրա կարող են ցուցադրվել օրինակ՝

- ուժային միջոցների սանդղակ,
- մարդկային մարմնի ճնշման կետերի տեղերը և ուղեցույց, թե ինչպես նվազ ուժային ազդեցության գործադրումն այդ կետերի վրա կարող օգտագործվել որպես վերահսկման մեխանիզմ,
- զսպման անզեն հնարքների օրինակներ,
- ձեռնաշղթայի պասիվ օգտագործման մեթոդներ,
- մահակի՝ որպես պաշտպանության կամ վերահսկման գործիքի օգտագործում:

Ոստիկանության ակադեմիայում, որի նպատակային լսարանը բաղկացած է բարձր սպայական կազմի աշխատակիցներից կամ ուսանողներից, որոնք այդ պաշտոնները հետագայում են ստանձնելու, բացակայում են հատուկ դասընթացներ ՀԿՊ և ՀԱՊ գործում առանցքային նշանակություն ունեցող այնպիսի թեմաների վերաբերյալ, ինչպիսիք են հասարակական կարգի պահպանության միջոցառումների կառավարումը, արտակարգ իրավիճակներում գործելու ծրագրերի մշակումը, միջգերատեսչական համագործակցությունը, ճգնաժամային իրավիճակների կառավարումը, «հրամանատարություն և վերահսկողություն» հասկացությունը՝ «ոսկյա, արծաթյա և բրոնզե» հրամանատարության մոտեցմամբ:

Ընդհանուր առմամբ, ուսումնակրթական միջավայրը, կրակային սիմուլյացիոն պարապմունքները և ոստիկանների անհատական անվտանգության ապահովումը ընդգծում էին այն ուրույն «կազմակերպական մշակույթը», ըստ որի ուսուցանվում են խնդիրների կարգավորման բարձր ուժային մեթոդները՝ փոխանակ շեշտադրվեն բոլոր իրավիճակներում նվազ ուժային մեթոդներ կիրառելու կարևորությունը և այդ առումով անձնական պատասխանատվությունը:

Ժողովրդավարական հասարակությունում ոստիկանությունից ակնկալվում է ոչ թե մարտարվեստների բարձր ուժային հնարքների, այլ այնպիսի զսպման միջոցների կիրառում, որոնք հավասարազոր կլինեն սպառնացող վտանգի աստիճանին կամ կասկածյալի վարքագծին:

Ներքին զորքեր

Դիտարկված միջոցառումներից մեկը Ներքին զորքերի լայնածավալ վարժանքն էր՝ կատարված անկարգությունների կարգավորման բարձր ուժային եղանակով: Վարժանքի ընթացքում կիրառվեցին մի քանի տեսակի պատնեշներ, վահաններով զինված ջոկատներ, ավտոմեքենայի փրկարարություն, ջրանետ մեքենաներ, լուսաձայնային միջոցներ, ձերբակալություն կատարող թիմ, մեքենային հրշիջում, փոքր բարիկադի (այրվող անվադողերից) քանդում և փշալարով ուղեփակող սարք: Վարժանքը գերազանց անցկացվեց՝ արհեստավարժ, զսպվածության համարժեք մակարդակով և լիովին համապատասխան առողջության և անվտանգության պահպանման կանոններին, ուժային միջոցների սանդղակը և տակտիկական հնարքները ճշգրտորեն համապատասխանում էին վարժանքի սցենարին:

Պարեկային ծառայություն

ՊՊԾ գնդի կողմից ցուցադրվեցին մի քանի տեսակի սարքավորումներ և ներխուժման վարժանքներ, այդ թվում՝ հատուկ ջոկատայինների մասնակցությամբ, որոնք կատարեցին ներխուժման տակտիկական գործողություններ՝ ավտոմեքենաներից և շենքերից, բացի այդ կիրառվեցին լուսաձայնային միջոցներ. այդ ամենը կատարվեց շատ բարձր մակարդակի վրա:

5. Կրթության ստանդարտացում (ՀԿՊ-ի մասով)

Թեև կարելի է ընդունել, որ ՀԿՊ որոշ գործառույթների իրականացումը հանձնարարված է տարբեր ստորաբաժանումներին, սակայն գոյություն չունի <u>նվազագույն համընդհանուր ստանդարտ</u> տակտիկական գործողությունների և դասընթացների կտրվածքով, մինչդեռ հետևողականություն ապահովելու համար աշխատանքները պետք է կատարվեն ըստ պետականորեն հաստատված ստանդարտների և ուսումնական ձեռնարկների:

Արդի ոստիկանական համակարգերում ընդհանուր նվազագույն ստանդարտների կիրառումը ընդունված գործելաոճ է, թեև որոշ տակտիկական գործողություններ ավելի շատ կիրառվում են մասնագիտացված ստորաբաժանումների կողմից, ընդհանուր տակտիկական գործողությունների ստանդարտացումը մնում է կարևոր պայման: Դա թույլ է տալիս, որպեսզի աշխատակիցները ծառայեն առավել արդյունավետությամբ՝ թվաքանակը հասցնելով նվազագույնի:
Բացի այդ այդպես բարձրանում է անձնակազմի կարողունակության մակարդակը և ոստիկանության ծառայության ընդհանուր արհեստավարժությունը:

Վերլուծության արդյունքում հաստատվեց, որ գոյություն չունի պետականորեն կամ առանձին ծառայությունների միջև ընդունված ստանդարտ կամ

վերահսկողություն դասանյութի և դասավանդողների՝ ստանդարտներին համապատասխանելու նկատմամբ: Նման ստանդարտացման ապահովումը կդիտվի որպես դրական գործելաոճ, այն կապահովի անձնակազմի վարքագծի միօրինակությունը և հնարավորություն կտա, որպեսզի անձնակազմն օգտագործելիս ավելի հստակ պատկեր լինի վերջիններիս կարողությունների վերաբերյալ՝ առավելագույնի հասցնելով գործողությունների արդյունավետությունը:

6. Ղեկավար անձնակազմի կողմից միջադեպերի օպերատիվ կառավարում

Երբ ՀՀ ոստիկանության համակարգը համեմատվում է միջադեպերի կարգավորման կամ ՀԿՊ «հրամանատարություն և վերահսկողություն» ժամանակակից մոտեցումների հետ, այն ներկայանում է իբրև ոչ գործուն, թերարդյունավետ և սոսկ ստորակարգային հրամաններով ղեկավարվող համակարգ: Լիազորությունները և որոշումներ կայացնելու իրավասությունը պետք է տրվի առավել համապատասխան օղակին՝ ըստ վերջինիս դերակատարության, այլ ոչ կոչման:

Այս «կատարողականի բացը»[11] լրացնելու նպատակով պետք է հատուկ դասընթաց մշակվի այն ղեկավար աշխատակիցների համար, որոնք ներգրավված են ծրագրման, հրամանատարության և վերահսկողության մեջ կամ բոլոր տեսակի միջադեպերի կարգավորման տակտիկական մակարդակներում: Նման դասընթացն ավելի նպատակահարմար կլինի անցկացնել երկրի ներսում, այն պետք է դրվի գործնական հենքի վրա՝ լրացված որոշակի տեսական պարապմունքներով: Դասընթացը պետք է նպատակաուղղված լինի ոչ թե բախումների կարգավորմանը բարձր ուժային եղանակով, այլ ընդգրկի այնպիսի թեմաներ, ինչպիսիք են հաղորդակցման միջոցների և հրամանների գրանցամատյանի[12] օգտագործումը, մասնագիտական օժանդակության ներգրավվումը (ապացույցների հավաքագրման թիմ[13]), մարդու իրավունքների, օրինաչափ բողոքի ակցիաները և տակտիկական հարցերով փորձագիտական խորհրդատվությունը[14]. Այդ ամենը ՀՀ ոստիկանությանն ավելի կմոտեցնի կայացած եվրոպական չափանիշներին:

---

[11] «Կատարողականի բացը» դա ներկա իրավիճակի և ցանկալի իրավիճակի միջև տարբերությունն է:

[12] «Հրամանների գրանցամատյանը» մի փաստաթուղթ է, որը կազմվում է անմիջապես միջադեպի վայրում՝ որոշումների կայացման ընթացքը արտացոլելու համար:

[13]«Ապացույցների հավաքագրման թիմի» պարտականությունն է կատարել տեսաձայնագրումներ՝ հետաքննության և դատավարության ժամանակ օգտագործելու կամ ոստիկանության գործողությունների փորձագիտական վերլուծության համար:

[14]«Տակտիկական հարցերով խորհրդականը» հատուկ որակավորում ունեցող աշխատակից է, հնարավորության դեպքում՝ հավատարմագրված, որը տակտիկական առաջարկություններ/այլընտրանքներ է մշակում՝ որոշումներ կայացնելու հարցում հրամանատարական կազմին օժանդակելու համար:

Որոշումների կայացում

Մտահոգություն առաջացրեց ՀՀ ոստիկանությունում որոշումների կայացման գործընթացը՝ սկսած միջոցառման հաստատումից՝ ընդհուպ մինչև օպերատիվ գործողությունների ծրագրումը: Ըստ տրամադրված տեղեկությունների՝ տվյալ միջոցառման հրամանատարը, անհրաժեշտության դեպքում, կարող է հետադարձ կարգով հիմնավորել իր կողմից կայացրած ցանկացած որոշում: Թեպետ հիշատակվեց, որ որոշակի փաստաթղթավորում կատարվում է, սակայն չի կիրառվում «հրամանների գրանցամատյանի» մեթոդը: Նման գրանցամատյաններում նկարագրվում է առկա իրադրությունը, մարտավարական նկատառումները, այս կամ այն որոշումը կայացնելու նպատակահարմարությունը՝ լինի դա գրավոր թե բանավոր (այսինքն՝ ռադիոհաղորդակցությունների ձայնագրություն):

Միջոցառումների ծրագրման և միջադեպերի կարգավորման փուլերում ՀՀ ոստիկանության գործողությունների ներքին և արտաքին թափանցիկությունն ապահովելու համար այս հանգամանքի վրա անհրաժեշտ է ուշադրություն դարձնել վաղ շրջանում:

7. Ռադիոհաղորդակցություն

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ոստիկանության մի շարք ծառայություններում ռադիոհաղորդակցությունը, ընդհանուր առմամբ, ցածր մակարդակի վրա է՝ նախ և առաջ առկա տեխնիկական միջոցների որակի և ֆիքսված ու շարժական համակարգերի պատշաճ օգտագործման մասով: Ոստիկանության տարածքային բաժիններն ապահովված են ռադիոհամակարգերով, սակայն դրանք հնացած են՝ հիմնականում գործում են մեկ հաճախականության վրա, չունեն ձայնագրելու հնարավորություն՝ հետագա վերլուծությունների և ստուգումների համար:

Դոնոր կազմակերպությունների աջակցությունը՝ շարժական համակարգ(եր), այսինքն՝ հատուկ նախատեսված և սարքավորված հրամանատարական ավտոմեքենա(ներ), հատկացնելու առումով կարող է իրապես նպաստել հաղորդակցությունների թափանցիկությանը և արդյունավետությանը, ընդ որում՝ իրատեսական ծախսերով:

8. Դոնոր կազմակերպությունների աջակցությունը

Դոնոր կազմակերպությունների՝ ֆինանսական, տեխնիկական (սարքավորումներ) և փորձագիտական օժանդակությունը պետք է մանրակրկիտ կերպով կազմակերպվի: Փորձը ցույց է տալիս, որ որոշ ոլորտների

փորձագետները, օրինակ՝ հրազենային կամ ՀԿՊ, հաճախ մասնագիտացած են լինում կարգավորման բարձր ուժային մեթոդների գծով և խրախուսում են ագրեսիվ միջոցների (արցունքաբեր գազ, ծխային և լուսաձայնային միջոցներ) և տակտիկական հնարքների ավելի լայն կիրառում՝ անտեսելով արդի ՀԿՊ-ում մեզանում ընդունված ոստիկանության պասիվ մեթոդների ուսուցումը: Սույն կարիքների վերլուծության ընթացքում այդ հանգամանքը անմիջապես ակներև դարձավ:

Դոնորների ցանկացած ուսումնակրթական աջակցություն պետք է հստակորեն համապատասխանեցված լինի ՀՀ ոստիկանության նախատեսվող զարգացումների և ՀԿՊ-ի ու ՀԱՊ-ի գծով հայեցակարգերի փոփոխության հետ՝ այլ ոչ թե հրամցվի թեթևակի փոփոխված «պատրաստի ապրանք», որն էլ ավելի կխորացնի տիրող դոկտրինան: Առաջարկվում է, որ դոնորների ուսումնակրթական աջակցությունն ավելի շատ օգտագործվի «Ոստիկանության ծառայության պասիվ մեթոդների կառավարում» դասընթացի մշակման համար, որը կանցկացվի հանրային ծառայությունների աշխատակիցների շրջանում՝ ճանապարհային ոստիկանության, ոստիկանության տարածքային բաժինների, ներքին զորքերի, դատախազության, տեղական ինքնակառավարման մարմինների շրջանում: Բացի այդ, կարող են ներգրավվել ոստիկանության կենտրոնական կառույցի՝ ծրագրման և կազմակերպական վերահսկողության ոլորտի համապատասխան պաշտոններ զբաղեցնող աշխատակիցներ:

9. Հատուկ միջոցները և մասնագիտացված ծառայությունները

Հատուկ միջոցներ

Ներքին զորքերի տրամադրության տակ է գտնվում հատուկ միջոցների լայն տեսականի՝ մահակներ, էլեկտրահարող սարքեր, արցունքաբեր գազ, լուսաձայնային և ուշադրությունը շեղող միջոցներ: Այս առումով մտահոգություն առաջացրեց այն, որ, երբ հաստատվում է որևէ հատուկ միջոցի տեսակի կիրառումը (օրինակ՝ էլեկտրահարող սարքի), ապա որոշումն առ այն, թե ինչ մակնիշի և տեխնիկական հատկանիշներ ունեցող սարք է ձեռք բերվում թողնվում է սարքը կիրառողի հայեցողության վրա: Այդ նպատակով չեն կիրառվում անկախ բժշկական, հոգեբանական, մշակութաբանական, զգայական չափանիշներ կամ վերլուծական մեթոդներ: Մինչդեռ նման մոտեցումը կողմնորոշում է, թե ինչպես է այս կամ այն սարքը գործում որոշակի միջավայրում՝ բացահայտելով հնարավոր վտանգները՝ կապված որոշակի խմբերին պատկանող անձանց[15] կամ եղանակային պայմանների հետ:

[15] Դասակարգումն ըստ խմբերի կատարվում է տարիքի, սեռի, առողջական և հոգեկան վիճակի հիման վրա, ինչպես նաև հաշվի են առնվում այն անձինք, որոնք բուն միջոցառման մասնակից չեն, սակայն կարող են հատուկ միջոցի կողմնակի ազդեցության զոհ դառնալ:

Ապացույցների հավաքագրման և մարտավարական հարցերով խորհրդական-ների ծառայություններ

Ո՛չ ներքին զորքերում, ո՛չ էլ ՊՊԾ-ում չկան ապացույցների հավաքագրման կամ մարտավարական խորհրդատուների հատուկ ծառայություններ: Ներքին զորքերում տեղեկացրեցին, որ ապացույցների հավաքագրման ծառայություն իրենք արդեն նախատեսում են ստեղծել, սակայն հարկ է նշել, որ նրանք լիարժեք կերպով չեն տիրապետում այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են «նախամիջադեպային» և «հետմիջադեպային», «նախնական օպերատիվ տեղեկությունների հավաքագրման թիմ»:[16]

Այս կարևոր ծառայություններն էլ են նպաստում օպերատիվ գործողությունների վստահելիությանը՝ բարձրացնելով ոստիկանության աշխատանքի թափանցիկությունը, քանի որ իրենց պարտականությունն է գրանցել առանձին անհատների և ամբոխի վարքագիծը, ինչպես նաև՝ ոստիկանության ցանկացած գործողություն, օրինակ՝ ամբոխին ուղղված պաշտոնական նախազգուշացումները, մարտավարական հնարքների կիրառումը, կալանքի և ձերբակալության դեպքերը:

10. Եզրահանգումներ

ՀՀ ոստիկանությունը տարանջատ կառույց է, որը գործում է հիմնականում միագործառութային մոդելի հիման վրա և խիստ հակված է ոստիկանության այն ոճին, որը քաղաքացիներին վերահսկում է, այլ ոչ թե ծառայություն մատուցում՝ նրանց աջակցելու համար: Միագործառութային մոտեցումն էլ առաջացնում է այն նկատելի տարբերությունը՝ ուսումնական, պաշտոնական և լիազորությունների առումով, ինչպես նաև տարբերությունը ոստիկանության տարբեր ծառայությունների աշխատակիցների միջև՝ քաղաքացիների հետ շփվելու պատրաստակամության առումով:

Տվյալ ամփոփման շրջանակում հնարավոր չէ անդրադառնալ զեկույցի բոլոր կողմերին, բայց և այնպես արժե շեշտադրել հետևյալ դիտարկումները. անհրաժեշտ է ավելի նպատակային կազմակերպել դոնոր կազմակերպությունների օժանդակությունը՝ տեխնիկական միջոցների նպատակահարմարության առումով, անհրաժեշտ է ոստիկանական սկզբնական կրթության ընթացքում խորացված ուսուցանել կոնֆլիկտների կարգավորման նվազ ուժային մեթոդները, անհրաժեշտ է տարբեր աստիճանների վերապատրաստման և որակավորման դասընթացներ անցկացնել ղեկավար

[16]Նախնական օպերատիվ տեղեկությունների հավաքագրման թիմի պարտականությունն է նախապես բացահայտել այն խմբավորումները և անձանց, որոնք կարող են մասնակցել անկարգություններին և այդ օպերատիվ տեղեկատվություն տրամադրել հրամանատարներին:

պաշտոնյաների շրջանում՝ ՀԿՊ-ի մասով վերջիններիս հմտությունները խորացնելու նպատակով:

Ռազմավարական մակարդակում առաջարկվում է փոփոխություն մտցնել օրենսդրությունում՝ վերադասակարգելու համար ստորին մակարդակի հատուկ միջոցները (ձեռնաշղթա, մահակ և դյուրակիր արցունքաբեր գազ) որպես անձնական պաշտպանության «համազգեստային» սարքավորում՝ հատկացնելով դրանք ծառայություն կատարող բոլոր աշխատակիցներին: Բացի այդ, բարձր մակարդակի հատուկ միջոցների տեսակները որոշելու և ստուգելու համար առաջարկվում է ստեղծել անկախ գիտական կառույց, որը կապահովի դրանց համարժեքությունն ու օգտագործման անվտանգությունը, ինչպես նաև համապատասխանությունը հաստատման և հաշվետվողականության հստակ սահմանված գործընթացին:

Ուսումնասիրությունն ի հայտ բերեց մի շարք հավանական «արագ լուծումներ», որոնք կարող են դրական տեղաշարժ ապահովել՝ ցածր ծախսատարությամբ: Նման «արագ լուծումներից» են՝ ոստիկանության աշխատակիցների անունը կամ համարը տեսանելի դարձնելը, ինչը թույլ կտա վերջիններս անմիջապես նույնականացնել, անցումը միասնական և ստանդարտային «ոստիկանի անվտանգության դասընթացի», ոստիկանության բոլոր ծառայությունների աշխատակիցների անհատական միջոցների ստանդարտացումը:

Շատ սահմանափակ է իրազեկվածությունը «հրամանատարության և վերահսկողության» ժամանակակից մոտեցման վերաբերյալ: Բացի այդ, բացակայում է հաղորդակցությունների վերահսկողության գործուն կառույց ստեղծելու հնարավորությունը՝ սարքավորումների սակավության և դրանք օգտագործելու տեխնիկական հմտությունների պակասի պատճառով: Մինչդեռ դրանք արդյունավետ կառավարման առանցքային գործոններից են, և առաջին քայլերը դեպի պատշաճ հաշվետվողականության ապահովումը պետք է լինեն ռադիոհաղորդակցությունների ձայնագրումները, կայացված որոշումների գրանցումը և ոստիկանության գործողությունների տեսագրումը:

Անհրաժեշտ է փոփոխել ոստիկանության ակադեմիայում և ուսումնական կենտրոնում ձևավորվող մտածելակերպը՝ սերմանելով «հանրային ծառայության» փիլիսոփայությունը, որն ունի պարզ նպատակներ՝ երաշխավորել մարդկանց անվտանգությունը փողոցներում և ոստիկանության ծառայությունը կատարել տեսանելի, սակայն ոչ թե պարտադրող, այլ վստահություն ներշնչող եղանակով: Նշված փոփոխություններն արդեն տեղ են գտել հանձին ՀՀ ոստիկանության ուսումնական կենտրոնի պետի, որը ձգտում է վերափոխել ոստիկանության ուսումնակրթական համակարգը և համահեղինակել է «ՀՀ ոստիկանության կրթական բարեփոխումների հայեցակարգ»-ը, որը շատ առումներով համահունչ է սույն կարիքների վերլուծության եզրակացություններին:

11. Առաջարկությունների ցանկ

Առաջարկություն 1

Ոստիկանության աշխատակիցների նույնականացման համարները կամ անունները՝ անկախ կոչումից կամ պաշտոնից, պետք է տեսանելի կերպով փակցված լինեն համազգեստին՝ որպեսզի հնարավոր լինի նույնականացնել աշխատակցին անձնապես, այլ ոչ միայն վերջինիս ստորաբաժանումը (բացառությամբ գործողությունների բացառիկ գաղտնիություն պահանջող դեպքերի):[17]

Առաջարկություն 2

Ոստիկանության ակադեմիայի ուսումնական ծրագրերը պետք է վերանայվեն՝ ապահովելու համար ոստիկանի սկզբնական ուսումնառության համատեքստում «Հասարակական անվտանգության պահպանություն» դասընթացի բոլոր թեմաների նպատակահարմարությունը: Իսկ վերապատրաստման դասընթացների շրջանակներում պետք է ներդրվեն պահանջվող հմտությունների հիման վրա մշակված հատուկ մոդուլներ՝ կապված հրամանատարական գործառույթների հետ: Այդ դասընթացները պետք է հատուկ մշակված լինեն այն աշխատակիցների համար, որոնք իսկապես ունեն այդ հմտությունների կարիքը, այլ ոչ թե ձգտում են սոսկ պաշտոնեական առաջխաղացման:

Առաջարկություն 3

«ՀՀ ոստիկանության կրթական բարեփոխումների հայեցակարգի» եզրակացություններին ու առաջարկություններին պետք է հավանություն տրվի, քանի որ դրանք շատ առումներով համահունչ են սույն կարիքների վերլուծության արդյունքներին:

Առաջարկություն 4

Ոստիկանության ակադեմիայում և ուսումնական կենտրոնում անցկացվող պարբերական վերապատրաստման դասընթացներում պետք է ընդգրկվեն ՀԿՊ-ի և ՀԱՊ-ի առավել առանցքային թեմաները և ներկայացվեն <u>բոլոր ծառայությունների</u> բոլոր աշխատակիցները:

---

[17] Բացառիկ գաղտնիություն պետք է կիրառվի առանձին գործողությունների, այլ ոչ՝ պաշտոնների դեպքում:

Առաջարկություն 5

Դասասենյակներում պետք է ցուցադրվի փոխկապակցվածությունը տարբեր մոդուլների միջև, որոնք, իրենց հերթին, հայեցակարգային և տեսային առումներով կապված են մարդու իրավունքների, օրենսդրական դրույթների և օրինաչափ ուժային միջոցների սանդղակի հետ, մինչդեռ այժմ դրանք ներկայացվում են իբրև առանձին միավորներ և ավելի շատ արտացոլվում են դրանց ծայրահեղ մոտեցումները:

Առաջարկություն 6

Դոնոր կազմակերպությունների՝ սարքավորումների տեսքով տրամադրվող աջակցությունը պետք է հստակորեն համապատասխանեցված լինի ՀՀ ոստիկանությունում կիրառվող մոտեցումներին և պահանջներին: Ցանկացած նվիրաբերվող սիմուլյացիոն սարքավորում պետք է համապատասխանի ծառայությունում օգտագործվող հրազենի տեսակներին և օպերատիվ իրավիճակին:

Առաջարկություն 7

Պետք է քննության առնել հրազենային պատրաստականության ուսումնական ծրագրում բախումների կարգավորման նվազ մահաբեր այլընտրանքային մեթոդներ/սարքավորումներ ուսուցանելու հնարավորությունը:

Առաջարկություն 8

Ուսումնական հաստատությունների մարզասրահներում պետք է ցուցադրվեն պաստառներ, որոնք կպատկերեն ուժային միջոցների սանդղակը, կոնֆլիկտների կարգավորման և նվազ ուժային հնարքները (այդ թվում՝ անզեն և մահակով) և ցանկացած պատեհ առիթով պետք է օգտագործվեն պարապմունքների ժամանակ:

Նշում. նման ցուցապաստառների պարագայում պետք է ընդունված կարգ դառնա ուժի կիրառման պասիվ մեթոդների պատկերումը: Վահաններ, հատուկ միջոցներ (այդ թվում՝ մահակներ) և հասարակական կարգի պահպանության միջոցառումներ ցուցադրող տեսաֆիլմերը պետք ներկայացվեն միմիայն համապատասխան համատեքստում, այլապես նման ցուցադրումներից պետք է ձեռնպահ մնալ՝ բարձր ուժային մեթոդներով կոնֆլիկտների կարգավորման կաղապարված մշակույթը կոտրելու համար:

Առաջարկություն 9

Ոստիկանության ուսումնական կենտրոնի բոլոր սաներին՝ նախքան աշխատանքի նշանակելը, որպես ՀԿՊ-ի գործնական դասընթացի մաս պետք է ներկայացվի ուսումնական ծրագիր՝ ոստիկանության ծառայության պասիվ մեթոդների վերաբերյալ:

Առաջարկություն 10

Ոստիկանության ակադեմիայի հրաձգարանը չի կարող ծառայել իր նպատակին և մտահոգություն է առաջացնում առ այն, թե ինչպես են ուսանողները ձեռք բերում ընդունելի չափանիշի կրակային պատրաստականությունը: Նման երկարատև (4 տարի) ուսման ժամանակամիջոցի համար որևէ այլընտրանքային ժամանակավոր տարածք օգտագործելը նպատակահարմար չէ՝ որակյալ ուսուցում և գործնական պարապմունքներ ապահովելու համար, և այդ հարցին պետք անհապաղ լուծում տրվի:
Նշում. Գնահատողը տեղեկացվեց, որ ԱՄՆ-ի կողմից դոնոր աջակցություն է տրամադրվելու տարածքը վերանորոգելու համար, սակայն անհրաժեշտ է ուսումնասիրել, թե ինչպես է ներկայումս իրականացվում ուսուցումը:

Առաջարկություն 11

Հարկավոր է ուսումնասիրություն անցկացնել՝ գնահատելու համար այն տակտիկական հնարքների նպատակահարմարությունը, որոնք՝

ա) բնույթով ագրեսիվ են,
բ) քաղաքացիների կողմից ընկալվում են իբրև ոստիկանության անհամաչափ հակազդեցություն:

Նշում. հասարակության շրջանում ստեղծված ոստիկանության կերպարը նույնքան կարևոր է, որքան միջադեպերի կարգավորումը:

Առաջարկություն 12

Անկարգությունների ժամանակ (ի տարբերություն ոստիկանի անձնական անվտանգության պաշտպանության) հատուկ միջոցների գործադրման համար պետք է մշակվեն հատուկ տակտիկական մեթոդներ՝ յուրաքանչյուր միջոցի համար առանձին: Այդ նպատակով կպահանջվի հստակ սահմանել լիազորող ատյան և, երբ հնարավոր է, պետք է պարտադիր կատարվեն և տեսաձայնագրվեն բանավոր/տեսային նախազգուշացումները: Նման մոտեցում պետք է կիրառվի սկսած հատուկ տակտիկական գործողությունների ժամանակ մահակներ գործադրելուց:

Առաջարկություն 13

Պետք է մշակվի «Ոստիկանի անվտանգության ուսուցում» ուսումնական ծրագիր, ինչպես նաև՝ համապատասխան մեթոդների հաստատված ձեռնարկ, ընդ որում՝ ոչ թե ուժային մեթոդները, այլ անզեն գործելու հմտությունները, ձեռնաշղթայի օգտագործման հնարքները և մահակի՝ որպես վերահսկման/զսպան և ինքնապաշտպանութան գործիքի օգտագործումը:

Առաջարկություն 14

«Ոստիկանի անվտանգության ուսուցումը» պետք է լինի ստանդարտային ոստիկանության բոլոր ծառայությունների համար, այդ ուղղությամբ պետք է մշակվի պատշաճորեն հաստատագրված դասավանդման և դասերի ծրագրման գործընթաց: Ծրագիրը կանցկացվի ֆիզիկական պատրաստականության և մարտարվեստի բոլոր տեսակի պարապմունքների ժամանակ:

Առաջարկություն 15

«Ոստիկանի անվտանգության ոսուցում» ուսումնական ծրագիրը պետք է մատուցվի որպես սկզբնական ուսուցման մաս կազմող առանձին հատուկ դասընթաց, շրջանավարտներին կշնորհվի ավարտական վկայական, որը պետք է ամեն տարի նորացվի: Դա հնարավորություն կտա ապահովելու ոստիկանության բոլոր ծառայություններում անհրաժեշտ որակավորման շարունակականությունը:

Առաջարկություն 16

Հարկավոր է վերանայել կրակային պարապմունքների և վերապատրաստումների գործընթացը՝ այդ նպատակով ապահովելով անհրաժեշտ մարտական զենք և հրածգարաններ, որպեսզի աշխատակիցների պատրաստականությունը համապատասխանի օպերատիվ պահանջներին: Սիմուլյացիոն սարքավորումների կիրառումը որոշակիորեն կնվազեցնի դրա հետ կապված ծախսերը:

Առաջարկություն 17

Բոլոր ուսումնական ծրագրերը, անկախ այն բանից, թե որտեղ են անցկացվում, պետք է գտնվեն ուսումնական գծով պետի վերահսկողության ներքո, վերջինիս պարտականությունն է լինելու ողջ համակարգում ապահովելու

ստանդարտացումը և վերաորակավորումը, ինչպես նաև՝ վերահսկելու ոստիկանության ակադեմիայից կամ ոստիկանության ուսումնական կենտրոնից դուրս անցկացվող առանց ծառայությունից կտրվելու բոլոր ուսումնական ծրագրերը:

Առաջարկություն 18

Պետք է մշակվի ձեռնարկ կամ ուղեցույց՝ ՀԿՊ-ի շրջանակներում կիրառվող տակտիկական հնարքների վերաբերյալ, որոնք հիմնված կլինեն համընդհանուր նվազագույն ստանդարտի վրա: Թեև ընդունելի է, որ որոշ նեղ մասնագիտական տակտիկական հնարքներն ավելի նպատակահարմար է կիրառել այդ գծով մասնագիտացված և ավելի լավ պատրաստված ծառայությունների կողմից, սակայն ընդհանուր բնույթի տակտիկական գործողությունները՝ պատնեշներ, վահաններ, մահակներ, որոնք կարող են կատարել ոստիկանության բոլոր աշխատակիցները պետք է նույնական լինեն յուրաքանչյուր ծառայությունում:

Առաջարկություն 19

Հասարակական կարգի պահպանության ջոկատների ղեկավարների ներուժն ու արդյունավետությունը առավելագույնի հասցնելու համար հարկավոր է մշակել հատուկ ուսումնական ծրագրեր՝ հասարակական կարգի պահպանության ոլորտում տակտիկական մոտեցումների, այլընտրանքներ գտնելու և կառավարելու հմտությունների, ինչպես նաև ջոկատների ղեկավարման հետ կապված պարտականությունների վերաբերյալ:

Առաջարկություն 20

Կառավարման առավել արդի մոտեցումների անցնելու նպատակով ղեկավար օղակի աշխատակիցներին հարկավոր է ապահովել «հրամանատարության և վերահսկողության» վերաբերյալ խորքային գիտելիքներով, այդ թվում՝ պարտականությունները պատվիրակելու, քանի որ դրա շնորհիվ է ապահովվում, որ միջադեպերի կառավարումը կատարվի պատշաճ մակարդակի վրա:

Առաջարկություն 21

Անխտիր բոլոր ծրագրվող օպերատիվ գործողությունները պետք է հիմնված լինեն հատուկ մշակված պլանի, ռիսկերի գնահատման վրա և արտացոլեն տվյալ միջոցառման ժամանակ առկա հանգամանքները, քանի որ ընդհանրական և նախապես հաստատված պլանների շարունակական կիրառումը սխալ մոտեցում է:

Առաջարկություն 22

Ավելի մեծ շեշտ պետք է դրվի, որպեսզի համապատասխան աշխատակիցների շրջանում խորացվեն ՀԿՊ-ի մասով հմտությունները և գիտելիքները՝ աստիճանաբար ձերբազատվելով այն մոտեցումից, երբ միջադեպերի հրամանատարությունը ստանձնելու հարցում պաշտոնը հանդիսանում է ինքնըստինքյան որոշիչ գործոն:

Առաջարկություն 23

Կառավարման ողջ գործընթացի արհեստավարժությունն ապահովելու համար պետք է մշակվի հատուկ ծրագիր օպերատիվ միջոցառումների հրամանատարների համար՝ «հրամանատարություն և վերահսկողության», հաղորդակցության, փորձագետների աջակցության, մարդու իրավունքների և օրինաչափ բողոքի ակցիաների ժամանակ ոստիկանական ծառայության կազմակերպման ուղղությամբ:

Առաջարկություն 24

Ոստիկանության բոլոր ծառայություններում պետք է կիրառության մեջ մտցվեն հրամանների գրանցամատյաններ, հատկապես՝ կարևոր միջոցառումների դեպքում, որպեսզի ապահովվի կայացրած որոշումների արդարացիությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

Առաջարկություն 25

Հարկավոր է վերափոխել ՀՀ ոստիկանության՝ «հրամանատարության և վերահսկողության» կարողությունների՝ հրամանատարական կենտրոններ/շարժական հաղորդակցման ստորաբաժանումներ ստեղծելու միջոցով, քանի որ դա հնարավորություն կընձեռի համակարգը դարձնել առավել ինտեգրված և ճկուն:

Առաջարկություն 26

Միջոցառումների կառավարման գործընթացում փոփոխություն մտցնելու նպատակով հարկավոր է քննության առնել դոնոր կազմակերպությունների միջոցով առնվազն մեկ շարժական հրամանատարական ավտոմեքենա ձեռք բերելու հնարավորությունը և ռադիոհաղորդագրությունների ձայնագրման և

հրամանների գրանցամատյանների ներդրման շնորհիվ նպաստել գործընթացի առավել բարձր թափանցիկությանը և հաշվետվողականությանը:

Առաջարկություն 27

Պետք է վերանայել այն գործելակերպը, ըստ որի ոստիկանության տարածքային բաժինների որոշ պաշտոնների աշխատակիցներ և ճանապարհային ոստիկանության աշխատակիցներ ծառայության ժամանակ չեն կրում հատուկ միջոցներ: Այդ ուղղությամբ պետք է ապահովել, որպեսզի բոլոր ոստիկանության ծառայությունների աշխատակիցները վերապատրաստվեն ոստիկանի անվտանգության հիմնական հմտությունների գծով և ստանան այդ գործողությունները կատարելու համար անհրաժեշտ սարքավորումներ/միջոցներ: Բացի այդ հարկավոր է երաշխավորել քաղաքացիների և ոստիկանության աշխատակիցների անհատական և իրավական պաշտպանությունը:

Առաջարկություն 28

Պետք է քննության առնել ձեռնաշղթաների և մահակի հատուկ միջոցներից՝ որպես պաշտպանվելու միջոցներ վերադասակարգելու հնարավորությունը, իսկ արցունքաբեր գազը՝ որպես անհատական անվտանգության միջոց, որը հետագայում կդառնա ուսումնական դասընթացների թեմա և ենթակա կլինի վերավկայագրման և վերապատրաստման:

Առաջարկություն 29

Դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվող աջակցությունը պետք է պատշաճորեն կազմակերպվի, որպեսզի համապատասխանի Հայաստանի Հանրապետության կարիքներին, այլ ոչ թե կիրառվի ընդհանրական «բոլորի համար նույնը» մոտեցումը:

Առաջարկություն 30

Հատուկ միջոցների բոլոր տեսակների և ձեռքբերման աղբյուրների հետ կապված որոշումները պետք է կայացվեն որևէ անկախ ատյանի կողմից, որը կկիրառի համապատասխան գիտական մոտեցումներ, այդ թվում՝ բժշկական, հոգեբանական և սոցիոլոգիական: Նշված մարմինը պետք է վկայագրի յուրաքանչյուր տեսակը և տրամադրի համապատասխան ուղեցույցներ: Պետք է ձեռնպահ մնալ այն գործելաոճից, երբ հաստատվում է միայն ընդհանուր

տեսակը, իսկ բուն ընտրությունը թողնվում է ոստիկանության հայեցողության վրա:

Առաջարկություն 31

ՀՀ ոստիկանությունում հարկավոր է ստեղծել ապացույցների հավաքագրման գծով հավատարմագրված մասնագետի հաստիք՝ ոստիկանության գործողությունների ընթացքում աջակցելու համար: Դրա նպատակն ապահովել ճշգրիտ ապացույցների առկայությունը՝ ցանկացած տեսակի քննությունների ժամանակ օգտագործելու, ինչպես նաև ոստիկանության գործողությունների տեսագրություն կատարելու համար:

Առաջարկություն 32

ՀՀ ոստիկանությունում հարկավոր է ստեղծել տակտիկական հարցերով հավատարմագրված խորհրդականի հաստիք՝ ոստիկանության գործողություններին աջակցելու համար: Տվյալ հաստիքի նպատակն է հրամանատարական կազմին տրամադրել ճշգրիտ և հավասարակշռված խորհրդատվություն և որոշումների կայացման գործընթացը դնել մասնագիտական հիմքերի վրա:

Առաջարկություն 33

Պետք է կատարել համապատասխան վերանայումներ, որպեսզի այն միջոցառումների ժամանակ, որոնցում նպատակահարմար է օգտագործել միջոցառման կազմակերպիչների անվտանգության աշխատակիցներին, վերջիններիս թիվն ու հմտությունները լինեն համաչափ՝ միջոցառումը խաթարող հանգամանքները նվազագույնի հասցնելու և անվտանգության ապահովումն առաջնային նպատակ դարձնելու համար: Առաջարկվում է քննության առնել նաև այս ոլորտում համապատասխան օրենսդրական ակտերի ընդունումը:

Առաջարկություն 34

Ոստիկանության բոլոր աշխատակիցներն իրենց նախնական կրթության և վերապատրաստումների[18] ժամանակ պետք է ուսուցանվեն ամբոխը ուղեկցելու և պատնեշներ կազմելու վերաբերյալ՝ իբրև սովորական ոստիկանական գործողությունների մաս:

---

[18] Մեկ այլ անվանում է «շարունակական ուսուցումը», որին հարկավոր է հետամուտ լինել ողջ ծառայության ընթացքում՝ արհեստավարժության մակարդակը պահպանելու համար:

Առաջարկություն 35

Միջոցառումների ծրագրման ժամանակ պետք է մեծ ուշադրություն դարձվի ճանապարհային երթևեկության կառավարման և միջոցառման կոորդինացման բաղադրիչների վրա՝ ընդգրկելով ճանապարհային երթևեկության կառավարման գործուն պլան՝ միջոցառման ողջ ժամանակահատվածի համար, ընդ որում՝ գերակայող խնդիր պետք է լինի հասարակության անվտանգության ապահովումը, այլ ոչ սոսկ միջադեպի կարգավորումը:

Առաջարկություն 36

Միջոցառումները վերահսկող ոստիկանության աշխատակիցները, հատկապես ճանապարհներին աշխատելիս (երթերի և ցույցերի ժամանակ) պետք է կրեն լավ տեսանելի հագուստ: Թեև այս առումով գոյություն ունի որոշակի մշակութային նախապաշարվածություն, քանի որ նման հագուստը համեմատվում է ցածր որակավորման հանրային ծառայողների համազգեստի հետ, դա չի կարող պատրվակ դառնալ և պետք է գտնվի որևէ հարմար ոճ:

Առաջարկություն 37

Միջադեպերի/պլանավորված միջոցառումների ժամանակ ծառայող բոլոր աշխատակիցներին պետք է նախապես ընդհանուր գծերով ծանոթացնել միջոցառման ողջ ընթացքին. ինչպես է կազմակերպվելու միջոցառման ոստիկանական ծառայությունը և որն է իրենց դերակատարությունը ընդհանուր ծրագրի շրջանակում: Բացի այդ, բոլորին պետք է ընձեռվի հարց տալու հնարավորություն: Այն փաստը, որ նույն աշխատակիցը նմանօրինակ միջոցառմանն արդեն մասնակցել է, չպետք է պատրվակ դառնա նախապատրաստական հրահանգավորումից բացակայելու կամ առհասարակ հրահանգավորում չանցկացնելու համար:

Առաջարկություն 38

Օպերատիվ պլան պահանջող բոլոր միջոցառումների ժամանակ պլանի թղթային կամ էլեկտրոնային օրինակներ պետք է նախապես՝ հրահանգավորումից առաջ կամ ընթացքում, տրամադրվեն հրամանատարներին: Բացի պլանի ամբողջական տարբերակից, պետք է տրամադրվի նաև հակիրճ տարբերակը, որը կամփոփի բոլոր ներգրավված աշխատակիցների հիմնական պատասխանատվությունները և պարտականությունները: Նշված փաստաթղթերը պետք է նաև բացատրություններ պարունակեն տվյալ միջոցառման արտակարգ իրավիճակներում գործելու ծրագրի վերաբերյալ:

Առաջարկություն 39

Միջոցառումների կամ հատուկ գործողությունների ժամանակ ոստիկանության ծառայությունները չպետք է օգտագործվեն իբրև անվտանգության ծառայության աշխատակիցներ, եթե իհարկե նման անհրաժեշտություն չի առաջանում ռիսկերի գնահատման արդյունքում:

Առաջարկություն 40

Ոստիկանության աշխատակիցները պետք է ուսուցանվեն և ընդգրկվեն հասարակական անվտանգության պահպանության տակտիկական գործողություններում, ինչպիսիք են՝ ամբոխի դինամիկայի գնահատումը, ամբոխի արդյունավետ մոնիթորինգը՝ լավ տեսադաշտ ապահովող դիրք ընտրելու միջոցով, օրինակ՝ կանգնելով բարձրադիր կետում, որը թուլ է տալիս տեսնել ողջ ամբոխը:[19]

Առաջարկություն 41

Ավելի մեծ շեշտ պետք է դրվի ամբոխի անվտանգության ապահովման վրա՝ իբրև ՀԱՊ-ի առանցքային բաղադրիչ: Հարկավոր է դասեր քաղել նախընթաց տարիներին Եվրոպայում պատահած մի շարք ողբերգալի միջադեպերից, օրինակ՝ Միացյալ Թագավորության Հիլսբըրոու և Բելգիայի Հեյսելի մարզադահլիճներում: Նշված միջադեպերի վերլուծության արդյունքները և առաջարկությունները պետք է օգտագործվեն միջոցառումների պլանավորման ժամանակ:

Առաջարկություն 42

Ոստիկանության աշխատակիցները, որոնք ներգրավվում են պլանավորված կամ ինքնաբուխ տեղի ունեցող խոշոր միջադեպերում պետք է նախապես հրահանգավորվեն և ժամանեն՝ անցնելով «նախնական տեղակայման վայրը»:[20] Այն աշխատակիցներին, որոնք օպերատիվ նկատառումներով միջոցառման վայր են ժամանում ուղղակիորեն, պետք է հնարավորինս արագ տրամադրվի անհրաժեշտ սարքավորումը, նրանք արագ կարգով՝ հրահանգավորվեն միջոցառման մասնկիցների համար ոչ տեսանելի վայրում և գործեն՝ ցուցաբերելով արհեստավարժություն:

---

[19]Բարձրադիր կետի լավ օրինակներից են շենքերի, բեմերի և փայտամածի աստիճանները, որոնք լավ տեսադաշտ են բացում՝ միևնույն ժամանակ չկտրելով կապը ամբոխի դինամիկայի հետ:

[20]«Նախնական տեղակայման վայրը» դա մի ապահով տարածք է միջոցառման մերձակայքում, որտեղից կարելի է արագ գործադրել անհրաժեշտ միջոցները:

Առաջարկություն 43

Ոստիկանության բոլոր աշխատակիցները պետք է անցնեն ճանաչողական դասընթաց «իրավիճակը սաստկացնող միջադեպեր»[21] տարբերակելու և ոստիկանության ծառայության վրա նման գործողությունների ազդեցության վերաբերյալ:

Առաջարկություն 44

Հարկավոր է վերանայել առանձին ոստիկանության ծառայությունների աշխատանքում և համատեղ ծառայություններում (օրինակ՝ ՊՊԾ-ի և ներքին զորքերի համատեղ պարեկությունները) կիրառվող հասարակական կարգի պահպանության ռազմավարությունը՝ ապահովելու համար ծառայությունների կազմակերպումը առավել ծախսաարդյունավետ և ռացիոնալ կերպով:

[21]«Իրավիճակը սաստկացնող միջադեպ» նշանակում է ցանկացած գործողություն ոստիկանների, քաղաքացիների կամ այլոց կողմից, որը կարող է առաջացնել անկարգությունների հանկարծակի վատթարացում, ընդ որում՝ դա կարող լինել և՛ տվյալ միջոցառման առնչությամբ և՛ ոչ: